ՄԻՐԱ ԱՆՏՈՆՅԱՆ
ԵՊՀ սոցիոլոգիայի ֆակուլտետի դոցենտ,
սոցիոլոգիական գիտությունների թեկնածու, դոցենտ

ՈՐԲԱԽՆԱՄՈՒԹՅԱՆ ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ԺԱՌԱՆԳՈՒԹՅՈՒՆԸ

Որբախնամության հայերի սոցիալական փորձը խարսխված է ցեղասպանության պատճառով որբացած երեխաների հանդեպ զգայական ընկալումների ու դրանից բխող մոտեցումների հենքի վրա: Որբախնամության սոցիալական փորձի վերլուծությունը ներառում է հիմնական երեք փուլեր՝ մինչ եղեռնը, եղեռնից հետո ընկած ժամանակաշրջանում և Հայաստանի խորհրդային տարիներին: Քննության առնելով որբախնամության սոցիալական փորձի հարուստ ժառանգությունը պատմական նշանակալից այդ փուլերում՝ հոդվածում ներկայացվում է սոցիալական փորձի առանձնահատկությունների ազդեցությունը հետխորհրդային շրջանին ներհատուկ որբախնամության ներկա պատկերացումների վրա՝ սոցիալական աշխատանքի համատեքստում: Հոդվածում հիմնավորվում է սոցիալական որբության արդի ընկալումների և ընտանեկան խնամքից զրկված երեխաների հանդեպ պետական և բարեսիրական մոտեցումների արդիականացման անհրաժեշտությունը:

Հանգուցային բառեր և արտահայտություններ. որբ, որբախնամ գործունեություն, բարեգործություն, այլընտրանքային ընտանեկան տիպի խնամք, սոցիալական որբություն, սոցիալական աշխատանք:

«Ուրիշի մասին հոգալու» գաղափարախոսությունը հայաստանյան իրականության մեջ ասպարեզ է եկել քրիստոնեության ընդունման առաջին իսկ փուլերում. դրա մասին հիշատակությունները տարբեր աղբյուրներում տեղ են գտել՝ սկսած Գրիգոր Լուսավորչի ժամանակներից: Արդեն չորրորդ դարում Ներսես Մեծի նախաձեռնությամբ պետական միջոցների հաշվին Հայաստանում բացվեցին բազմաթիվ բարեգործական հաստատություններ, այդ թվում՝ «այրենոցքները», որոնք նախատեսված էին հատկապես այրի կանանց և որբերի համար՝ որպես ապաստարաններ, որտեղ նրանք ստանում էին ապրուստի միջոցներ:[1] Հանրային խնամքի կազմակերպման՝ նման մասշտաբային գործընթացը տրամաբանորեն առաջ բերեց դրա իրագործումն ապահովող ինստիտուտի պահանջ, ինստիտուտ, որը գաղափարախոսական համապատասխան խարիսխներից զատ օժտված կլինի ներքին բարձր ինքնակազմակերպվածությամբ: Դվինի և Պարտավի սուրբ ժողովների կանոնները ձևակերպեցին այդ պահանջը՝ «... բարեգործական հաստատությունների հոգատարությունը հանձնելով վանական միաբանություններին»[2]: Այսպիսով՝ հանրային խնամքի կազմակերպման և իրագործման հիմնական պատասխանատուն եկեղեցին էր՝ վանական միաբանություններով և քահանաներով, որոնցից յուրաքանչյուրն իր հանձնառության համայնքի ներքին ցանցի գործարկման և բարոյական արժեքների հիմնասյուների կիրառման միջոցով ստեղծում էր այն բուֆերային ֆոնը, որով թույլ չէր տալիս ձախողված ճակատագրերով անհատների, հատկապես որբերի մեկուսացումը համայնքից ու համայնքային կյանքից:

Որբերի հանդեպ կազմակերպված հասարակական խնամք ունենալու անհրաժեշտությունն այդ վաղ փուլում,

1 Տես Աստուածաշունչ, Ավետարան ըստ Մատթևոսի, 5. 17, Տպագրուցավ Սուրբ Գրուց Ընկերությունների Ծախսովը, 1990թ., էջ 68-71:

2 Կանոնագիրք, Բ, 200-215, էջ 3-18:

փաստորեն, գիտակցվում և արդեն իսկ գործակվում էր, և հայտնի էին որբերի մասին հոգ տանելու համապարփակ սոցիալական մեխանիզմները, որոնք կամ փոխարինող ծնողներն էին կամ համայնքի մեկ այլ անդամ: «Այնուհետև, պատմության ընթացքում, այլևս չենք տեսնում պետական բարեգործութեան այսպիսի ընդարձակ սիստեմ: Բարեգործությունն անցնում է անհատներին»[1]: Բարեբախտաբար, որբերին ուղղված ուշադրությունն այդ անցման պատճառով ոչ թե նվազում, այլ ավելի հասցեական է դառնում՝ ի լրումն նահապետական ընտանիքների միջսերնդային փոխօգնության և համայնքային վերահսկման սոցիալական մեխանիզմների:

«Որբին տիրություն անելը» պատվաբեր առաքելություն էր, որը բնականոն ստանձնում էր երեխայի մերձավոր բարեկամը, իսկ դրա անհնարինության դեպքում՝ քահանայի ընտրությամբ՝ համայնքի մեկ այլ պատվարժան ընտանիք: Թե՛ առաջին, թե՛ երկրորդ դեպքում որբին խնամողը «հոգեծնող» էր կոչվում, իսկ խնամարկյալը՝ «հոգեզավակ»[2]: Այս դրույթը հայերի սոցիալական պրակտիկայի անքակտելի մասն էր դարերի ընթացքում՝ ընդհուպ մինչև Հայաստանի խորհրդայնացումը: Շնորհիվ այս մեխանիզմների՝ մինչև եղեռնը մեծ որբանոցների կարիք պատմական Հայաստանում չի եղել, և դրանք փոխարինվել են եկեղեցիներին կից դպրոցներով, որտեղ ուսանել են նաև որբերը, և որոնց հովանավորությունը ստանձնել են անհատ բարերարներ իշխանական հայտնի տներից:

Հայաստանում որբախնամ բարեգործության ծաղկման համար էական դեր է խաղացել (և շարունակում է խաղալ) Քրիստոնեության հռչակած հիմնարար սկզբունքներից մեկը. «Նուիրաբերողները վարձ պիտի ստանան թէ այս և թէ հանդերձեալ աշխարհում»[3], ինչը խթանել է որբերին (ներառյալ սոցիալական որբերին) ուղղված անհատ բարերարների և անձնուրաց միսիոներների գործունեությունը: Նման կոդեքս ունենալն, ըստ էության, կանոնակարգում էր հանրային խնամքի մասնակիցների գործունեությունը: Ներսես Մեծի ժամանակների պետական բարեգործությունից մասնավոր բարեգործության անցումը թույլ տվեց որբերի սոցիալական խնամքի մեխանիզմների ընդհանրական, անդեմ պատկերը փոխարինել անհատականացված և զգացմունքային հոգատարությամբ[4]: Այս անցումը մեր իրականության մեջ ինչ-որ առումով պարտադրված էր տարաբնույթ ողբերգական իրադարձություններով, ինչպիսիք էին եղեռնը և դրան նախորդած առանձին ջարդերը:[5] Այլ երկրներում նման անցումը ավելի շատ հանդիսանում էր մարդկանց օգնելու տևական սոցիալական պրակտիկայի աստիճանական հասունացման արդյունք, քան արտակարգ իրավիճակներին հետևող անխուսափելի արձագանք:

Հատկանշական է, որ որբախնամ գործունեությունը հայերի սոցիալական պրակտիկայում չի նշանակել միայն որբանոցների կազմակերպում. ընտանե-

1 Ա. Ադոյան, Սիրո և ընտանիքի էվոլյուցիան, Երևան, Հայաստան, 1990թ., էջ 5:

2 Հետաքրքրական է հոգեզավակության կնքման ծեսի խորհուրդը. անկախ տարիքից՝ երեխան եկեղեցի է տարվում և քահանայի ձեռքով տեղավորվում ապագա մոր մոտ, ծածկվում ճերմակ ընդարձակ շապիկով, ապա շապիկը վեր բարձրացնելով՝ քահանան երեխային հանձնում է ապագա ծնողին: Դրանով որբն այլևս որբ չէ, այլ հոգեզավակ:

3 Ա. Բուդուղեան, Կարիք և բարեգործություն, Նոր Նախիչևան, Տպ. Եղբ. Յ. և Ա. Ավագյանների, 1901 թ., էջ 11:

4 Նմանատիպ անցման օրինակ է Հյուսիսային Եվրոպայում 17-18-րդ դարերում մեծ տարածում ստացած «Կոֆեդական շարժումը»՝ որպես բարեգործության իմաստավորման լավ օրինակ. բարեգործություն ոչ թե որպես բարի կամքի արտահայտում, այլ «ներդրում հասարակական ախտերի կորեկցիայի գործընթացում»:

5 Կոտորածներն ընթացան մի քանի փուլերով. առաջին շրջանը՝ 1890-ական և 1900-ական թթ., երկրորդը՝ 1915-17 թթ., իսկ երրորդը՝ 1918–1920 թթ., ընդհուպ մինչև 1921 թ. ապրիլ (Շիրակի «չեզոք գոտում»):

կան այլընտրանքային տարբերակների համատարած կիրառումը՝ աթալիկություն[1], խնամակալություն, հոգեծնողություն և, հատկապես, որդեգրություն, լայնորեն քաջալերվում էր եկեղեցու կողմից, ինչը որբախնամությունը դարձնում էր համեմատաբար «երեխայակենտրոն»[2]: Եվրոպական լուսավորության հետ առնչվող մտավորականները, հասկանալով, որ տգիտությունն է «ամենայն չարիքների աղբյուրը», գաղափարական պայքարի, տպագիր խոսքի միջոցով հայ հարուստների բարեգործական եռանդն ուղղում էին դեպի անխնամ մնացած երեխաների կրթական-դաստիարակչական գործունեությունը:

Հասկանալի պատճառներով եկեղեցու և բարեգործական միությունների կողմից կարիքավոր մարդկանց հանդեպ հոգածությունը տարածում է գտել հասարակական զարգացումների այն փուլերում, երբ ներքին ու արտաքին պատերազմների ու ճգնաժամերի հետևանքով տիրել են համընդհանուր քաղց, համաճարակ, տեղահանություններ և այլն: Այս հոգածության անհրաժեշտությունը հատկապես սուր էր Մեծ եղեռնի տարիներին: Որևէ պետություն, հավանաբար, կդժվարանար արդյունավետ արձագանքել ավելի քան հիսուն հազար որբացած մանուկների, բազմահազար անտուն մարդկանց, տեղահանված, ցաքուցրիվ եղած ընտանիքների կարիքներին, առավել ևս զորավիգ լինել նախադեպը չունեցող համատարած վշտից ու զրկանքներից տառապող տուժածների հոգսերին: Հայաստանի պարագայում դա շատ ավելի բարդ խնդիր էր, քանի որ, թեև երկիրը հզոր եկեղեցի ուներ, այնուամենայնիվ, չուներ պետականություն:

Առավել ողբերգական էր Թուրքիայի և այլ երկրների տարածքներում մնացած որբերի ճակատագիրը, որոնց խնամատարության գործի հիմնական ստանձնողը դարձավ արտասահմանի հայությունն՝ ի դեմս ազգային տարբեր կազմակերպությունների, ինչպես նաև որոշ, հատուկ այդ նպատակով ստեղծված արտասահմանյան բարեսիրական կազմակերպությունների: Հայկական կազմակերպությունների շարքում նշանակալի էր Հայկական բարեգործական ընդհանուր միության որբախնամ գործունեությունը,[3] որի բոլոր որբանոցներում սաները ոչ միայն կրթություն են ստացել, այլև սովորել որոշակի արհեստ:

Որբի սոցիալական հեռանկարի հանդեպ իրական մտահոգությունը գործնականում «ինչպես ձուկ որսալ» հայտնի մոտեցման արտացոլումն էր, ինչն այդ շրջանում արտերկրում բուռն զարգացում ապրող սոցիալական աշխատանքի հենասյուներից էր: Նույն մոտեցումն էին կիրառում նաև մի շարք միսիոներներ իրենց գործունեության մեջ: Այսպես, «Կին միսիոներներ» կազմակերպության ներկայացուցիչ նորվեգացի Կատարինե Բյոդիլ Բյորնսին (Կատարինե մայրիկ) Ալեքսանդրապոլում բացում է «Լուսաղբյուր» անունը կրող մանկատունը՝ սեփական միջոցներով հոգ տանելով 33 հայ որբուկների համար՝ առաջին պլանում դնելով որբերի զբաղվածության «գիտենալ-կարողանալու» հենքը, և ոչ թե պարզ հոգածությունն ու կերակրելը:

1 Աթալիկությունը հայերի սոցիալական պրակտիկայում գոյություն է ունեցել ընդհուպ մինչև 19-րդ դարի սկիզբը: Այն երեխայի հարազատ ծնողի համաձայնությամբ նրան այլ ընտանիքում մեծացնելն է՝ ընդունող ընտանիքի ավանդույթների շրջանակում, ինչը ենթադրում է նաև երեխային վարժեցնելը արհեստներին, վերջինիս անհատույց աշխատանքը: Որպես կանոն, երեխան այդպես էլ մնում է ընդունող ընտանիքում: Այս մոդելը կիրառվել է բազմազավակ աղքատ ընտանիքներում: Աթալիկության օրինակ է հանրահայտ Գիքորի պատմությունը:

2 Բազմաթիվ երկրների, այդ թվում Հայաստանի սոցիալական պրակտիկայում, ի հեճուկս ընդունված միջազգային փաստաթղթերի գաղափարախոսության, երեխաների խնամքի կազմակերպման ձևերը շարունակում են լինել ավելի շատ մեծերի, քան երեխաների կարիքներին հարմար պատասխան. ընտանիքը զավակ չունենալու պարագայում փնտրում է հարմար լուծում:

3 Տես Լեո, Երեսնամյակ Հայոց Բարեգործական Ընկերություն Կովկասում 1881-1911, Թիֆլիս, 1911 թ.:

Մինչ այդ, դարասկզբին, Մուշում ականատեսը դառնալով կոտորածների՝ Բյոդիլ Բյորնն իր անձնական միջոցներով խնամում և ստույգ կորստից փրկում է հարյուրավոր երեխաների[1]: Լայնորեն հայտնի է նաև շվեյցարացի նշանավոր հայասեր Յակոբ Կյունցլերի հայանպաստ գործունեությունը: Կյունցլերը Բեյրութում հայ որբևայրիների համար հոսպիտալ է հիմնում, օժանդակում մի շարք որբախնամ հաստատություններին ստեղծմանը[2]: Հազարավոր դեռատի հայուհիներ ու որբևայրիներ բարերարի աջակցությամբ իրենք են սկսում օգնության ձեռք մեկնել ուրիշներին՝ գործելով ու կարելով զանազան հագուստներ որբերի համար. գործունեություն, որն օգնում է նրանց ֆիզիկական գոյատևումից զատ՝ արժանապատվությունը պահպանել՝ ոգեշնչվելով ուրիշին օգտակար լինելու զգացումից:

Քաջալերված նման օրինակներից՝ Կ. Պոլսում Սրբուհի Գալֆայանը 15 օրվա ընթացքում եկեղեցիների բակերից, քաղաքի աղքատիկ թաղամասերից հավաքում և իր տանը ապաստան է տալիս 2–10 տարեկան որբ աղջիկների՝ նրանց խնամքի համար ծախսելով իր ողջ խնայողությունները: Նրա որբախնամ նախաձեռնությանն աջակցում է տեղի հայոց պատրիարքը:[3] Նման աջակից ընկալմանը զուգահեռ, ժամանակակիցները նորաբաց որբանոցի մայրապետին հիշում են գյուղեգյուղ, տնետուն դեգերելիս, երբ թակելով շատերի դռները՝ օգնություն էր խնդրում որբերի համար՝ արժանանալով նաև նախատինքի ու անգամ ապտակի, որին պատասխանում էր. «Շնորհակալ եմ, էֆենտի՛, այս ապտակը իմ բաժինս է, հապա խեղճ որբերո՞ւս ինչ տանիմ»:[4] Հաց փնտրելով իր «խեղճ որբերու» համար՝ Սրբուհին, այնուամենայնիվ, շատ մեծ ուշադրություն է դարձնում, որ որբերը սովորեն վաստակել ձեռքի արհեստների միջոցով՝ ասեղնագործություն, հելյունագործություն, ընդ որում դա անում էին միացյալ ու վաճառում կամ նվիրում բարերաներին՝ ի նշան որբերի հանդեպ նրանց հոգածության համար երախտագիտության: Այս քաջարի տիկնոջ խիզախումը՝ պաշտպանելու կարիքի մեջ հայտնված որբերին, անգամ հանրության կողմից չհասկացված լինելու գնով, ուղղակիորեն վկայում է սոցիալական աշխատանքում փուլային ձեռքբերումներ ապահոված, արևմտյան աշխարհում հայտնի բարերար կանանց գործունեության հետ զուգահեռների մասին:

Ամենածավալուն և մասշտաբային որբախնամ գործունեությունը, թերևս, կապված է Մերձավոր Արևելքի Ամերիկյան նպաստամատույց կոմիտեի անվան հետ (Ամերկոմ[5]), որը ձևավորվել է 1918 թ–ին՝ այդ տարածաշրջանում 1915 թ–ից արդեն գործող ամերիկյան բարեգործական հաստատությունների՝ հայկական և սիրիական նպաստամատույց կոմիտեների միավորմամբ: Հայոց ցեղասպանությունից հրաշքով փրկված տասնյակ հազարավոր հայ որբերի խնամքն ապահովելու համար այդ կոմիտեները բազում որբանոցներ էին պահում Սիրիայում, Հունաստանում, Եգիպտոսում, Պաղեստինում, Կոս-

1 Տես http://parsamean.blogspot.com/2011/08/blog-post_23.html

2 Տես http://hayq.blogspot.com/2008/04/event-commemorating-swiss-humanist.html

3 Պարադոքսալ ձևով որբանոցն արժանանում է անգամ սուլթան Համիդի հոգածությանը: Մայրապետից ընծա ստանալով նրբարվեստ մի գորգ՝ ի նշան բարձր գնահատանքի, սուլթանը 300 ոսկի է շնորհում որբանոցին: Երկար տարիներ սուլթանական տնից որբանոց են ուղարկվում օրվա հացն ու միսը:

4 https://krishayas.wordpress.com/2010/04/15/

5 Մերձավոր Արևելքի ամերիկյան նպաստամատույց կոմիտեն՝ Ամերկոմը, որի գլխավոր գրասենյակը գտնվում էր Բոստոնում, հիմնադրվել է 1915 թ-ի սեպտեմբերին՝ Թուրքիայում ԱՄՆ-ի այն ժամանակվա դեսպան Հենրի Մորգենթաուի խնդրանքով: Դեսպանն ԱՄՆ պետքարտուղարին հեռագիր էր ուղարկել՝ խնդրելով միջնորդել, որ նախագահը ստեղծի մի կոմիտե, որը կօգնի փրկել հայերին: Պետքարտուղարը գրությունը փոխանցել էր ԱՄՆ նախագահ Վուդրո Վիլսոնին: Այնուհետև ամերիկյան մի քանի մտավորականի ջանքերով հիմնվել էր կազմակերպությունը:

տանդնուպոլսում և այլուր:

Որքան էլ զարմանալի թվա, հայ որբերի խնդիրներով զբաղվել են նաև Թուրքիայի կառավարությունն ու նրա առանձին առաջնորդները: Որոշ աղբյուրներ վկայում են, որ այդ «բարի կամքի» դրսևորումն իրականում քող էր՝ թաքցնելու որբ մնացած երեխաների զանգվածային մահմեդականացումը («սպիտակ եղեռն»): Մյուս կողմից, որբ ու թափառող, անխնամ մնացած երեխաներին մեկ տեղում հավաքելը զգուշավորություն էր՝ կանխարգելելու համաճարակների տարածումը: Ի լրումն կենտրոնացված կերպով մահմեդականացման ջանքերի՝ Թուրքիայի կառավարությունը քաջալերում էր իր քաղաքացիներին տան աշխատողի, բանող ձեռքի, սև գործեր կատարելու համար ընդունել հայ որբերին, ովքեր սովի ու համաճարակների պատճառով դատապարտված էին մահվան. գինը մահմեդականացվելու պարտադրանքն էր: Այլ խոսքով՝ կյանքի իրավունք՝ ինքնությունն ու կրոնը փոխելու դիմաց: Կառավարությունը նաև արտոնում էր, որ հայ երեխաների անունները թրքացվեին:[1]

Հայաստանում, Թուրքիայում, Մերձավոր Արևելքում, Կովկասում, Ռուսաստանում[2], Եվրոպական երկրներում ու Ամերիկայում սկիզբ առած ինքնաբուխ, հախուռն որբախնամ և որբահավաք գործունեությունը եղեռնին հաջորդած անգամ շատ բարդ շրջանում, այնուամենայնիվ, կանոնակարգելու նպատակով լուրջ փորձեր արվեցին: Դեռևս 1919 թ-ի օգոստոսին Փարիզից ՀՀ խնամատարության նախարարությանն ուղղված նամակում Եգիպտոսի որբախնամ ընկերության նախագահ Զապեյ Եսայանն այն կարծիքն ուներ, որ հայ որբ երեխաների խնամատարությունը, դրանով զբաղված ընկերությունների ու մարմինների աշխատանքները համակարգելու, ներգաղթի, որբերի խնամակալության և տարագիրների վերաբերյալ որոշումներ կայացնելու գերապատիվ իրավունքը վերապահվում էր Հայաստանի Հանրապետության կառավարությանը[3]:

Բուն Հայաստանում քայքայված ու կաթվածահար հանրային օգնության վարչական մարմինների ջանքերը որքան էլ լարված, այնուամենայնիվ, անզոր էին արձագանքելու աննախադեպ չափերի հասնող գաղթականների ու որբերի կարիքներին: Զանգվածային ցեղասպանության հետևանքների «բուժման» փուլում բուն Հայաստանում եկեղեցու, մտավորականության, ազգի էլիտայի, բարեգործական ընկերությունների կարևորագույն մտահոգությունը գերեվարված որբերի փրկության կազմակերպումն էր՝ փրկագին վճարելու, փախուստը կազմակերպելու կամ այլ միջոցներով:

Որբանոցների մայրաքաղաք դարձած Ալեքսանդրապոլում որբախնամ հաստատությունների մի ամբողջ համախմբություն է ստեղծվում՝ որբանոցներ, դրանց կից մանկապարտեզներ, դպրոցներ, դպրոց-արհեստանոցներ,

1 Հատկանշական է, որ Թուրքիայի սոցիալական ոլորտի ներկայիս որոշ պատասխանատուներ համոզված են, որ «...հայերը, 1912–15 թթ. հեռանալով Թուրքիայի տարածքից, իրենց հետևում թողեցին բազմաթիվ երեխաների, որոնք անխնամ էին, սոված ու որբ: Բազմաթիվ թուրք ընտանիքներ, բարի կամքի դրսևորման միջոցով, իրենց խնամքի ներքո վերցրին այդ «հետևում մոռացված երեխաներին» («left-behind children») և, բնականաբար, այդ երեխաները հետագայում մահմեդականացվել են», ինչպես նշեց Թուրքիայի սոցիալական ապահովության նախարարության ներկայացուցիչը Մալթայում 2005 թ-ին Խնամատարության միջազգային կոնֆերանսի ժամանակ: Միջազգային հրապարակում նման ելույթը, բնականաբար, որևէ քննադատության չկարողացավ դիմանալ, սակայն ակնհայտ են ապատեղեկատվությամբ խեղաթյուրված պատկերացումները թուրք ժամանակակից սոցիալական գործիչների մոտ:

2 Դեռևս 1914 թվականի հոկտեմբերի 26-ին մոսկվաբնակ հայերը Ս. Մամիկոնյանի, Կ. Կուսիկյանի, Ա. Ծատուրյանի, Ա. Ջիվելեգովի նախաձեռնությամբ ստեղծում են Մոսկվայի հայկական կոմիտեն:

3 Տես http://serials.flib.sci.am/openreader/merc_arev_6/book/index.html#page/102/mode/2up

մանկավարժական տեխնիկում, բուժքույրերի դասընթացներ[1]: «Որբերը հանրակրթական առարկաներից զատ սովորում էին զանազան արհեստներ, օտար լեզուներ: Դպրոցները համեմատաբար ապահովված էին դասագրքերով, գրենական պիտույքներով, բանիմաց մանկավարժներով: Այստեղ մեծ ուշադրություն էր դարձվում արհեստագործական կրթությանը: Օրինակ՝ գյումրեցի Ծառուկյանների տոհմապետ հյուսն Հարությունը այդ տարիներին նաև որբանոցի արհեստանոցի վարպետն էր և իր արհեստն էր սովորեցնում որբերին: Տղաները սովորում էին նկարչություն, ատաղձագործություն, դերձակություն, կոշկակարություն, թիթեղագործություն, կազմարարություն, հյուսնություն, սափրիչություն, երկաթագործություն, կավագործություն, փականագործություն: Պոլիգոնի որբերը սեփական ուժերով կազմակերպած թատերական խումբ ունեին: Աղջիկ որբերը հմտանում էին ամեն կարգի տնային գործերի մեջ»[2]:

«Ամերկոմի մանկատների» սանեի հետ աշխատանքը հստակ կանոնակարգված էր (նրանք մանկատնից դուրս գալուց հետո հետևողականորեն տեղավորվում էին աշխատանքի, «տրվում էին արհեստի»): Յուրօրինակ է եղել նաև այդ խնամքի ու դաստիարակչական տների կարգավիճակը. դրանք դիտվել են որպես ինքնուրույն գերատեսչություններ, ազատվել են հարկերից, կարող էին գնել գույք, տարածք, կառուցել հիմնարկություն, ստանալ եկամուտ (զվարճանքների կազմակերպումից և բարեգործական այլ միջոցառումներից):[3] Ըստ էության, ներկա պատկերացումներով սոցիալական ձեռնարկության այս նախատիպը հանրային պատասխանատվության կարգավորման հետաքրքրական օրինակ է, եթե չասենք՝ ուսանելի:

Այդ շրջանում Հայաստանում Ամերկոմի գործունեությունը մի կողմից՝ ցանկալի էր ու քաջալերվում էր, մյուս կողմից կառավարության, եկեղեցու և մտավորականների շրջանում «լուրջ մտահոգություն կար, որ որբերի խնամքին զուգահեռ՝ օտար ափերից ժամանած մարդկանց էր վերապահվում նաև փոքրիկների կրթության, նրանց հոգևոր դաստիարակության ոլորտը, որը հղի էր ապագայում հայրենիքի, սեփական ժողովրդի պատմության ու մշակույթի նկատմամբ ոչ լիարժեք պատկերացումներ ունեցող քաղաքացիներ կրթելու և դաստիարակելու վտանգով»[4]: Ակնառու էր նաև հայ եկեղեցուց հեռանալու, բողոքական հայացքներով տոգորվելու վերաբերյալ անհանգստությունը:

Ընդունելով հանդերձ այդ որբանոցներում կիրառվող մոտեցումների՝ կրթության, արհեստների, անքննադատ մոտեցման, առողջ բարոյահոգեբանական մթնոլորտի առավելությունները, որոնք իրապես նպաստում էին որբերի սոցիալական վերականգնմանը[5] և պատրաստում նրանց հետագա ինքնուրույն կյանքին (այն, ըստ էության, որբի հետ աշխատանքի գրագետ մոդելի նախատիպ էր), վերը նշված մտահոգություններն, ի վերջո, համապատասխան հետևանքներ ունեցան այդ որբանոցների համար:

Խորհրդային իշխանության հաստատումից հետո բարեգործական կազմակերպությունների հիմնած մանկատների անձնակազմի հանդեպ սկսվեց մեծածավալ հալածանք՝ ազգակործան գոր-

1 Տես http://www.armin.am/images/menus/2033/Hovsepyan_E.pdf

2 http://hetq.am/arm/news/44812/aleqsandrapoli-orbanocnery.html

3 Տես Դուբրանոյ Վ. Ի., Ռուզեկոյ Վ. Ա., Մանկատանը դաստիարակվողների հոգեկան զարգացումը, Մոսկվա, 1988 թ., էջ 9:

4 http://www.armin.am/images/menus/2033/Hovsepyan_E.pdf

5 «...Հիշում եմ և էն լավ օրը, երբ առաջին անգամ վերահսկողները գանգատվեցին, թե արդեն չարաճճի են դարձել, դժվարացել է կառավարելը, ոմանք զվարթ երգում են խմբով, կատակներ անում, ուրախուրախ ճչում, կրկչում: Ու ամենքիս աչքերն էլ լցվեցին ուրախության արտասուքով»: Հ. Թումանյան

ծունեության մեջ մեղադրանքներով[1]: Հալածանքը և պայքարը թափանցեցին մանկատները, և դրա մեջ ներքաշվեցին նաև երեխաները (նրանք բաժանվեցին սկաուտականների և պատկումական ջոկատների):

Գաղափարախոսական գործիքը սկսեց գործել ոչ միայն որբանոցներում. ինչպես հայտնի է՝ Հոկտեմբերյան հեղափոխությունն, ընդհանուր առմամբ, շրջադարձային դեր ունեցավ բարեգործության ոլորտի համար: Բոլշևիկները քննադատեցին այն՝ որպես «անցյալի մնացուկ» և ընտրեցին պետության վրա հիմնված՝ երեխաների խնամքի և սոցիալական օգնության «կատարելագործված» համակարգը՝ երեխաներին վերաբերող հարցերում առաջնահերթությունը տալով պետության դերին: Կարճ ժամանակում ստեղծվեցին բազմաթիվ պետական մանկատներ, խնամքի ու դաստիարակության տներ, երեխաների ընդունիչ-բաշխիչ կայաններ, ներդրվեցին այլընտրանքային խնամքի հետաքրքիր տարբերակներ:

Որբ և սոցիալական որբ երեխաների համար այլընտրանքային խնամքի տարբերակները մեծ թափ ստացան Հայրենական պատերազմից հետո, սակայն, մինչ այդ, խորհրդային շրջանի համար հատկանշական էր հայտնի՝ խնամատար ընտանիքների փորձը, որը կիրառվեց մսուր-մանկատան աշխատանքները թեթևացնելու նպատակով: Երեխաների կարիքների համար միջոցներ հավաքագրելու նպատակով պարբերաբար դրամական պարտադիր տուրք էր գանձվում մշակույթի և զվարճանքի օջախներից: Այս նպատակով անգամ առանձնացվել էր մարմին, որը պատասխանատու էր այդ տուրքի հավաքագրման համար: Անօթևան երեխաների խնդիրներով զբաղվելու համար առանձնացվեցին համապատասխան կադրեր՝ սոցդասավարներ[2], որոնք ընտրվում էին կինբաժիններից և կոմերիտմիության ներկայացուցիչներից: Հարկ է նշել, որ մանկատներում երեխաների խնամքի ու հատկապես առողջության պահպանման խնդիրները հեռու էին ընդունելի մակարդակից. մեջբերելով Շպիտալնիկին՝ «Անչափահաս որբերին ու անօթևան երեխաներին տրամադրված շենքերից շատերը անհրապույր, խոնավ ու խարխուլ են, պիտանի չեն բնակության համար: Երեխաների միայն 50 տոկոսն ունի մահճակալ կամ հարկաբաժին, մնացած 50 տոկոսը պարզապես քնում է հատակին: Վերմակների և բարձերի մեջ լցված է խոնավ խոտ: Ոչ բոլոր երեխաներն ունեն սպիտակեղեն, ննջասենյակներում վառարաններ չկան, այդ պատճառով էլ ցրտից հիվանդանում են հարյուրավոր երեխաներ: Շաբաթներով երեխաների սպիտակեղենը և հագնելիքը չի փոխվում»[3]:

Խնամվողներին հագուստով ու կոշիկով բավարարելու ամենաառաջնային քրոնիկ խնդիրը լուծելու համար մի շարք մանկատներում բացվեցին արհեստանոցներ, պոլիգրաֆիական արտադրություն, իսկ գյուղական շրջաններում՝ այսպես կոչված՝ «գյուղատնտեսական ստորին տիպի դպրոցներ»՝ այդպիսով ապահովելով խնամվողների զբաղվածությունը: Այդ գործընթացը երկու նպատակ էր հետապնդում՝ շահ և աշխատանքային դաստիարակություն: Հայրենական պատերազմից հետո ՀՍՍՀ-ում գոյություն ուներ 33 մանկատուն՝ 4817 երեխաներով, այդ թվում՝ 2 ինտերնատ կույր, խուլ ու համր երեխաների համար: Ինչպես ամենուրեք, մանկատներում երեխաների դաստիարակությունը կառուցվում էր սոցիալիստական հասարակարգի գաղափարախոսու-

1 Ոչ պետական որբանոցներում դաշնակցական ազգային գաղափարախոսություն էր ուսուցանվում խնամվողներին:

2 Սոցիալական աշխատողի գործառույթներին շատ մոտ այս պարտականությունը հետագայում փոխարինվել է գաղափարական աշխատանքի ֆունկցիայով:

3 Պ. Ի. Շպիտալնիկ, Մանկատների ուսումնադաստիարակչական աշխատանքի փորձից, Երևան, 1953 թ., էջ 38:

թյան հիման վրա, ինչն իրական կյանքից աստիճանաբար դուրս մղեց ազգային և հոգևոր դաստիարակությունը:

Մանկության սոցիալական պաշտպանության խորհրդային համակարգը նպատակաուղղված էր աճող սերնդին «ձերբազատելու ավանդականություններից», այդ թվում՝ ընտանեկան ավանդական դաստիարակությունից, ինչն իրականացնելու համար գաղափարախոսական մեքենան և սոցիալական պրակտիկայի մեխանիզմները կիրառվում էին առանձին անհատի, երեխայի, համայնքի և ավելի մասշտաբային հարթություններում: Այդ ամենի հետ մեկտեղ նաև նվազագույնի հասցվեցին երեխաների կարիքների բավարարմանն ուղղված բարեգործական գործունեություն ծավալելու հնարավորությունները:

Ինչպես և ողջ Խորհրդային Միության տարածքում, 60-70-ականներին Հայաստանում, մեծ թափ ստացան հատուկ գիշերօթիկային հաստատություններն այն երեխաների համար, ովքեր ընտանիք և ծնողներ ունեին, սակայն բախվել էին «սոցիալական որբության» հետ: Ի լրումն օժտվածության (այսպես կոչված՝ «թեքումով հաստատություններ») և հաշմանդամության առանձնահատուկ կարիքների (դրական խտրականություն), խնամքի դժվարություններ, ընտանեկան կոնֆլիկտներ, ծնողների անկարողություն, աղքատություն և այլն խնդիրներ ունեցող երեխաները հայտվում էին այսպես կոչված՝ «ծնողական խնամքից դուրս մնացած» երեխաների հաստատություններում: Անկախացումից առաջ ՀՀ-ում կային մոտ 65 գիշերօթիկային հաստատություններ: Անկախացումից հետո բացվեցին նորերը՝ պատասխանելու անցումային շրջանով պայմանավորված, էկոլոգիական աղետի, պարտադրված պատերազմի ծանր հետևանքների, բռնի տեղահանված մարդկանց մեծ հոսքի, ներքին ու արտաքին միգրացիայի բարձր մակարդակի պատճառով սոցիալական որբերի խնամքի հանդեպ հետզհետե աճող պահանջարկին:

Հետխորհրդային շրջանի տնտեսական և սոցիալական համակարգերի ճգնաժամի հետևանքով հազարավոր ընտանիքներ հայտնվեցին սեփական երեխաների խնդիրները հոգալու անկարողության հանդիման[1]: Նախկին համակարգից հետո դեռևս պահպանվող գիշերօթիկային ինտերնատային հաստատությունները դարձան այդ ընտանիքների համար երեխաների խնդիրների լուծման միակ այլընտրանքը (1988թ-ին գիշերօթիկային հաստատություններում ապրում էր ընդամենը 1000, իսկ 2002թ-ին՝ 10.000 երեխա, այդ թվում մոտ 800-ը՝ մանկատներում)[2]: Եթե նախկինում այդ հաստատությունները հիմնականում ստեղծվել և ծառայում էին հատուկ կարիքներ ունեցող երեխաներին՝ հաշմանդամություն ունեցող, տարբեր օժտվածություններ ունեցող, ապա ճգնաժամի և հետճգնաժամային տարիներին ինտերնատները և մանկատները սկսեցին ապաստանել աղքատ ու անբարենպաստ ընտանիքների երեխաներին՝ սոցիալական որբերին:

1988թ-ի երկրաշարժից հետո բազմաթիվ միջազգային և սփյուռքի բարեսիրական կազմակերպություններ Հայաստան բերեցին ոչ միայն նյութական օգնություն, այլև սոցիալական, հոգեբանական ծառայությունների մոդելներ: Հասկանալի հիմնավորումներով՝ միջազգային և տեղական կազմակերպությունների ու ծառայությունների ջանքերի կենտրոնում խնամազուրկ երեխաներն էին: Հետխորհրդային տարիների մանկության պաշտպանության ոլորտի կարևոր առանձնահատկություններից մեկը ընտանիքի վրա հիմնված՝ խնամքի և դաստիարակության, կրթության իրավունքի երաշխավորման,

1 Տես «Ներդաշնակ հասարակություն» սոցիալական աշխատողների ասոցիացիա, հկ, ՀՀ մանկատների արագ գնահատում, «ՀՀ մանկական հաստատությունների արագ գնահատում» հաշվետվություն, ՄԱԿ-ի մանկական հիմնադրամ, Երևան, 2010 թ.:

2 Տես ՄԱԿ-ի Մանկական Հիմնադրամ, Երեխաների ինստիտուցիոնալ խնամքը Հայաստանում, հաշվետվություն, 2010-2012 թթ.:

երեխայի շահերի պաշտպանության բազմաբնույթ, ոչ պետական ծառայությունների հիմնումն էր՝ ոգեշնչված միջազգային առաջավոր պրակտիկայից:

Անցման պայմաններում երեխաներն ունեին տարրական կենսամակարդակի ապահովման բազմաթիվ խնդիրներ (սնունդ, հագուստ, կրթության համար անհրաժեշտ պարագաներ, բնակարանային անբավարարություն, ջեռուցման խնդիր և այլն): Այդ խնդիրների լուծմանն ուղղված քայլեր սկսեցին իրականացնել բազմաթիվ սփյուռքահայ բարեգործներ, սփյուռքահեն բարեսիրական կազմակերպություններ և տեղական հասարակական բարեգործական կազմակերպություններ: Շնորհիվ այդ միջամտության՝ հումանիտար աղետի փուլը Հայաստանում, կարծես թե, հաղթահարվեց, սակայն նոր խնդիրներ առաջ եկան, որոնք, ինչպես և պատմության նախորդ շրջապտույտներում, պահանջում են կենտրոնացում, համաձայնեցված գործելակերպ պետության, եկեղեցու և բարեգործական կազմակերպությունների միջև՝ խնամազուրկ երեխաների խնդիրներին գրագետ արձագանքելու համար: Հայաստանում պետական կամ ձևայնացված խնամքի (մանկատներ, խնամքի ու պաշտպանության հաստատություններ) ներքո գտնվող երեխաների միայն մեկ տոկոսն է որբ[1]: Դրան հակառակ, երկրում տարեցտարի աճում է «սոցիալական որբ» կամ ընտանեկան խնամքից զրկվող երեխաների թիվը ներկա ճգնաժամերի պատճառով՝ գործազրկություն, արտագաղթ, աղքատություն, արժեքային փոփոխություններ, սոցիալական վերահսկողության բնական մեխանիզմների թուլացում, ընտանիքում միջսերնդային հարաբերությունների փոխակերպում և այլն:

Երկրին օգնության հասած սփյուռքահայության հիշողության մեջ երեխաների այս վիճակը ասոցացվում է եղեռնի ու որբության հետ, ահա ինչու, ամբողջ ուշադրությունը և ջանքերը կենտրոնացվում են՝ օգնելու մանկատներին: Որբախնամությանը կամ սոցիալական որբությանն արձագանքելու ներկա մեխանիզմները ենթակա են փոխակերպման՝ հավասարակշռության բերելով պատմական սոցիալական փորձն ու երեխայի իրավունքները արժևորելու՝ ժամանակակից առաջավոր սոցիալական պրակտիկան: Ըստ էության, ներկայումս որբ կամ սոցիալական որբ կարգավիճակն ունեցող երեխաների համար առկա են խնամքի կազմակերպման ավանդական բոլոր տարբերակները՝ խնամակալությունը (մեծ մասամբ՝ հարազատական), որդեգրությունը և խնամքը հաստատության պայմաններում (նախկին որբանոցները): Պակաս պրակտիկ է կամ դեռևս վերագործարկման հոլովույթներում է գտնվում խնամատարության տարբերակը: Ընտանեկան խնամքին փոխարինող այս այլընտրանքային տարբերակներն անհամաչափ են կիրառվում. առավել գործածական է հաստատությունների տարբերակը, ինչը բացատրվում է կազմակերպչական ու վերահսկողական գործընթացների դյուրությամբ, նպատակահարմարությամբ, ինչպես նաև սփյուռքի վերաբերմունքով: Վերջինս անձնուրաց, անմնացորդ, բայց նաև մոլորված բարեսիրության դրսևորում է՝ նույնացնելով սոցիալական որբությունը իրական որբության հետ:

Մանկատների տարբերակում գրեթե չեզոքացված է հարազատ ծնողների դերը. պետությունը փոխարինում է ծնողին՝ հանձն առնելով վերջինիս պարտականությունները, մինչդեռ երեխայի հանդեպ իրավունքները մնում են անփոփոխ: Պետությունը փոխարինում է ծնողին, քանի որ վարչարարական մեթոդներով անհնար է օգնել, որ վերջինս վերականգնի խաթարված ընտանեկան կյանքի նորմալ գործառնումը: Նույն վարչարարական մեթոդները թույլ չեն տալիս ընտանիքի վերականգնման անհնարինության դեպքում ծախսա-

1 Տես նույն տեղում:

տար մեծ հաստատությունների փոխարեն երեխային առաջարկել ընտանիքի վրա հիմնված այլընտրանքային տարբերակներ, որոնք պակաս ծախսատար են և երեխայի սոցիալական հեռանկարի տեսակետից՝ ավելի խոստումնալից: Իրականում, պրակտիկայում սոցիալական աշխատանքի հնարավորությունները սահմանափակ, կամ գրեթե չեն կիրառվում սոցիալական որբերի խնամքի կազմակերպման համար,[1] ինչով էլ բացատրվում է ընտանիքահեն խնամքի տարբերակների անհամաչափ զարգացումն ու կիրառումը, սակայն պակաս կարևոր չէ նաև պատմական փորձի ժառանգությունը և վերջինիս արտացոլումը ներկա գործելակերպում:

Ինչի՞ մասին է վկայում հայերի պատմական սոցիալական պրակտիկան: Քրիստոնեության ընդունումից հետո երեխաների սոցիալական պաշտպանության ոլորտում տեղի ունեցան բավականին կարևոր տեղաշարժեր: Դա բեկումնային շրջան էր երեխայի իրավունքներն աստիճանաբար կարևորելու տեսակետից: Հասարակական խնամքի ստեղծված առաջին համակարգը միանգամայն համահունչ էր երեխաների ու խոցելի խմբերի կարիքներին և չնայած իր վաղ ծագմանը՝ շրջահայաց կերպով ներառում էր հովանավորչության և ինքնախնամքի սահմանի պահպանման շեշտադրման կարևորությունը: Ինչպես նշվում է Թուղթ Մագաղաթացում. «Մի կերակրե, որովհետև քաղցած է, կերակրե, որպեսզի հետայսու քաղցած չլինի...»[2]:

Հասկանալով, որ «Մենակ նիւթական օգնութիւնը, որ տրվում է առանց բարձրացնելու ազգաբնակութեան մտաւոր և բարոյական մակերևոյթը, կարող է հետևանք բերել ծուլութիւնը, անտարբերութիւնը, մուրացկանութիւնը, մի խօսքով բարքերի կազմալուծմանը», բարեգործական միությունները միջոցներն ուղղում էին հատկապես որբ երիտասարդների համար կրթության կազմակերպմանը և նրանց զանազան արհեստների ուսուցմանը, սակայն պակաս կարևոր չէին համարում աղքատ և դժվարությունների մեջ գտնվող ծնողներին նեցուկ լինելը՝ «աշխատանոցներում» տեղավորելու, այլ օգնություններ տրամադրելու միջոցով:

Խնամքի կենտրոնացված հաստատությունների (որբանոցներ և այլն) ստեղծման և պահպանման համար եկեղեցու ջանքերը միաժամանակ ուղեկցվում էին այլընտրանքային խնամքի տարբերակների բարոյական խթանման միջոցներով: Եկեղեցին հոգ էր տանում, որպեսզի առանձին ինքնակամ խնամողների և բարերարների հասարակական համարումը նույնքան բարձր լինի, որքան որբանոցների հովանավորների: Եվրոպական լուսավորության հետ առնչվող մտավորականները, հասկանալով, որ տգիտությունն է «ամենայն չարիքների աղբյուրը», գաղափարական պայքարի, տպագիր խոսքի միջոցով հայ հարուստների բարեգործական եռանդն ուղղում էին դեպի որբերի կրթական-դաստիարակչական գործունեությունը, որի նպատակը մարդկանց ինքնաբավ գործելու հնարավորությունների ընձեռումն էր՝ սոցիալական աշխատանքի ներկա հենասյունը[3]:

1 Ներկայումս առավել կիրառական է «կյանքի դժվարին պայմաններում հայտնված երեխա» եզրույթը:

2 Աստուածաշունչ, Ավետարան ըստ Մատթևոսի, 5. 17, Տպագրուցավ Սուրբ Գրուց Ընկերությունների Ծախսովը, 1990 թ.:

3 Հետաքրքրական է, որ 100 տարի առաջ Երևանի թեմական դպրոցի տարեկան հաշվետվության մեջ նշվում են այն նույն խնդիրները, որոնք այժմեական են նաև մեր օրերի համար՝ «թոշակների պատճառով աշակերտներին վերադարձնելը (նկատի ունի ուսման վարձը), չքավորության կարիքներից ելնելով՝ ստիպված ժամանակին չհաճախելը, ծնողաց կամքով տներում և խանութներում որևէ գործ կատարելը, բնակարանների հեռավորությունը, չքավորությունը՝ ոտնաման չունեն, մի ձեռք զգեստ, որը կարկատելու կամ լվանալու պատճառով անհնար է հաճախելը, ուսումնական պիտույքներ չունենալը, անբավարար սնվելու պատճառով տկարությունը, ծնողաց անճշտությունը, անտարբերությունը»:

Կարիքների ցանկը կարծես չի փոխվել, արձագանքի մեխանիզմները նույնպես հայտնի են ու թեև չեն ճանաչվել որպես սոցիալական աշխատանքի սաղմեր, այնուամենայնիվ, կարիքներին արձագանքելը սոցիալական մշակույթի մաս է կազմել: Իր պատմական զարգացման ընթացքում որբախնամ գործունեությունը ձեռք է բերել տարբեր ձևեր՝ ողորմությունից սկսած մինչև հասարակական և ապա սոցիալական պաշտպանության կազմակերպված պետական համակարգ, որը զուգակցվում է մասնավոր և հասարակական բարեգործական գործունեության տարբեր տեսակների համադրման հետ:

Ձևավորված այդ համակարգում խնամքի մեծ հաստատությունները շարունակում են մնալ որբախնամ գործունեության հիմնական մաս, թեև որբության իրողությունը փոխարինվել է սոցիալական որբությամբ: Չնայած այն հանգամանքին, որ որբանոց եզրույթը փոխարինվել է մանկատուն, մանուկների տուն, խնամքի ու պաշտպանության հաստատություն և նմանատիպ այլ անվանումներով, այդ հաստատությունների հասարակական ընկալումը շարունակում է մնալ որպես որբանոց (սոցիալական հիշողությամբ): Ըստ այդմ, հատկապես սփյուռքահայ բարերարների շրջանում, օգնության ձևերի մասին պատկերացումները խարսխված են կենտրոնացված խնամքի կազմակերպման հենքի վրա՝ եղեռնի հիշողությունների հետ կապված զգայական ակնհայտ շեշտադրումներով: Ըստ էության, մերօրյա սոցիալական որբությունը դեռևս չի գտել համապատասխան ընկալում և արձագանք:

Ներկայումս Հայաստանում և սփյուռքում ձևավորվել է որբախնամ գործին նվիրյալ անհատների, եկեղեցու, բարեգործական միությունների միջամտության և օգնության հախուռն մշակույթ, որը հասարակական ճանաչում է բերում հեղինակներին, գնահատանք եկեղեցու կողմից, սակայն ակնհայտ է նաև, որ այդ գործունեությունը կանոնակարգման, համաձայնեցման, համակարգման նույնքան կարիք ունի, որքան դարեսկզբին՝ եղեռնից հետո ընկած շրջանում:

Որբախնամ գործունեության կանոնակարգմանն ուղղվող ջանքերն, ըստ էության, կաշկանդված են «մատից փուշ հանող» բարեգործական կազմակերպությունների հանդեպ երախտագետ վերաբերմունքի և դրանից բխող հարաբերությունների պատճառով: Ահա թե ինչու, որբախնամ բարեգործական գործունեությունը շարունակում է մնալ ինքնաբուխ, իսկ սոցիալական որբերին ուղղված հանրային միջամտության ձևերը՝ ոչ ներդաշնակ՝ միասնական տեսլական չունենալու համատեքստում:

Ի տարբերություն իրական որբությանն արձագանքելու պատմական հայտնի փորձին ու սոցիալական կյանքում ձևավորված մշակույթին, սոցիալական որբությունը պակաս ճանաչված է, ոչ լիարժեք բացատրված: Իրական որբությունն արժանանում է անվերապահ դրական վերաբերմունքի և օգնելու աներկբա պատրաստակամության, այն դեպքում, երբ սոցիալական որբությունը արժեքների, բարոյականության վերաբերյալ կոնֆլիկտող, բարդ ու խճողված պատկերացումների տիրույթում է՝ երևույթին արձագանքելու հակասական սոցիալական մեխանիզմներով: Թվում է՝ այլևս հասունացած է սոցիալական աշխատանքի անհատական և հանրային մակարդակի հնարավորությունների որդեգրման անհրաժեշտությունը՝ գրագետ արձագանքելու սոցիալական որբության ներկա ֆենոմենին՝ համախմբելով փոխօգնության, ուրիշի մասին հոգ տանելու՝ հասարակության դեռևս չիրացված ներքին հնարավորությունները և ապավինելով որբախնամ գործունեության պատմական հարուստ ժառանգությանը: Սոցիալական ոլորտի՝ ներկայումս ընթացող բարեփոխումները և սոցիալական աշխատողի ինստի-

տուտի՝ պետական մակարդակով ճանաչումը ենթադրում են խոստումնալից նախադրյալներ նման անցում կատարելու համար, միևնույն ժամանակ, այդ անցումն առանց մասնագիտական հարթակում հայեցակարգային մոտեցումների բյուրեղացման և հիմնական դերակատարների՝ սփյուռքի բարերարների ու բարեսիրական կազմակերպությունների միջև միասնական մոտեցումների ձևավորման, պարզապես իրատեսական չէ:

ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

1. Աստուածաշունչ, Ավետարան ըստ Մատթևոսի, 5. 17, Տպագրուցավ Սուրբ Գրուց Ընկերությունների Ծախսովը, 1990 թ.:
2. Կանոնագիրք, Բ, 200-215:
3. Ա. Ադոյան, Սիրո և ընտանիքի էվոլյուցիան, Երևան, Հայաստան, 1990 թ.:
4. Ա. Բուդուղեան, Կարիք և բարեգործություն, Նոր Նախիչևան, Տպ. Եղբ. Ց. և Ա. Ավագյաննե-րի, 1901 թ.:
5. Լեո, Երեսնամյակ Հայոց Բարեգործական Ընկերություն Կովկասում 1881-1911, Թիֆլիս, 1911 թ.:
6. Վ. Ի. Դուբրանոյ, Վ. Ա. Ռուզեկոյ, Մանկատանը դաստիարակվողների հոգեկան զարգացումը, Մոսկվա, 1988 թ.:
7. Պ. Ի. Շպիտալնիկ, Մանկատների ուսումնադաստիարակչական աշխատանքի փորձից, Երևան, 1953 թ.:
8. «Ներդաշնակ հասարակություն» սոցիալական աշխատողների ասոցիացիա, հկ, ՀՀ մանկատների արագ գնահատում, «ՀՀ մանկական հաստատությունների արագ գնահատում» հաշվետվություն, ՄԱԿ-ի մանկական հիմնադրամ, Երևան, 2010 թ.:
9. ՄԱԿ-ի Մանկական Հիմնադրամ, Երեխաների ինստիտուցիոնալ խնամքը Հայաստանում, հաշվետվություն, 2010-2012 թթ.:
10. www.parsamean.blogspot.com
11. www.hayq.blogspot.com
12. www.krishayas.wordpress.com
13. www.serials.flib.sci.am
14. www.armin.am
15. www.hetq.am

СОЦИАЛЬНОЕ НАСЛЕДИЕ ПО УХОДУ ЗА СИРОТАМИ

МИРА АНТОНЯН

Доцент факультета социологии ЕГУ, кандидат социологических наук

Социальная экспертиза армянского народа по уходу за сиротами в значительной степени лежит в основе эмоционального восприятия и соответстующего подхода к осиротевшим в результате геноцида детям. Анализ социального опыта по уходу за сиротами включает в себя три основных этапа: до геноцида, после геноцида и эпоха советской Армении. Изучая богатое, исторически значимое наследие социального опыта в данный период, статья рассматривает воздействие собенностей социального опыта, характерное для постсоветского времени, на современное понимание ухода за сиротами, присущее социальной работе. В данной статье обосновывается необходимость актуализации государственных и благотворительных подходов к восприятию социальных сирот и детей лишенных семейного ухода.

SOCIAL HERITAGE OF ORPHAN CARE

MIRA ANTONYAN

Associate Professor of Faculty of Sociology, Yerevan State University, PhD in Sociology

Social expertise of the Armenian Nation of the orphan care mostly depends on the emotional perception of genocide orphans struggles and the adequate behaviour towards them. The analysis of social expertise in orphan care includes three main phases: before genocide, after genocide, and during the Soviet era. Examining the rich heritage of social expertise during those phases, the article addresses its effects on modern, post-Soviet perceptions of orphan care in the context of social work. The article justifies the need to modernize state and charity approaches to current perceptions of the problems of social orphanhood, and children deprived of parental care.